

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշխարիոյ համար	12 ֆր.
սարկիսի	7 "
վեցամսեայ	7 "
Արսասահմանի համար	15 ֆր.
սարկիսի	8 "
վեցամսեայ	8 "
Ամերիկայի համար	3 ռ.
սարկիսի	3 ռ.
վեցամսեայ	1.50 "

Ծանուցան ռոյր ա նաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին ա էլի սնգալեհրու համար 20 0/0 զեղը կըլայ:

Վառնայի համար ձեռ ֆե 10 սանթիմ է

# ՉԱՐՔՇԱՐԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳ՝ՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԻ ԵՒ ՇԱՐՔՇԱՐԻ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ յի կըլ իմ քարտիսակս հասցիլն

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjourn" Varna (Bulgarie)

Պուշխարիոյ համար

ձեռ ֆե 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար

ձեռ ֆե 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեկ ռուիս

ՇԱՐՔՇԱՐԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԵԻԿ ՎՃԱՐԷ

«ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ.

ԴԻՆԵԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՁ»

Արգէն այս անունով բը բոջիւրը յանձնված է սպագրութեան:

Բոջիւրի նպատակն է, առանց խճճանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՛ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց. Ինչպէս է որ բոջիւրի մէջ փաստող գոկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն:

Բոջիւրի գինը սպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր:

Դիմել «Շարքշարի» Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գըտնուի Վիեննա քաղաքի Ժողովրդական վրայ. կը ստանայ զանազան հայերէն թերթեր. Ան հասարակ բոլոր հայ կամարեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն: Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները:

ԱՅՍ ԱՆԳԱՍ ՏԱՐՔԵՐ Է

Փիլիպէի մեր մի ընկերով գրութիւնը, որ զետեղում ենք այս համարում, վերջանում է հետեւեալ կասկածոտ տողերով.

«Անցեալ անգամ բէակցիան զանազան էնտրիկներով յաջողեցաւ լռեցնել բողոքող ձայները այս անգամ տեսնանք...»

Մենք ուզում ենք փարատել այդ տողերի մէջ երեւացող կասկածը պարզելով անցեալի և ներկայի տարբերութիւնը:

Անցեալ ընդհանուր ժողովում բէակցիան կարողացաւ յաղթանակել՝ որովհետեւ ողջ էր այդ ուղղութեան մարմնացում Բրիտտափոր Միքայէլեանը և կազմակերպութեան պատրաստի գրպաները գտնվում էին նրա տրամադրութեան տակ... Մինչդեռ այսօր ոչ Բրիտտափորը ինքը գոյութիւն ունի և ոչ էլ հացկատակներին հրապուրող գրամը: Անցեալ անգամ երկրի մի մասի գլխին կախված վտանգը ստիպում էր բողոքողներին զիջող լինել... գոնէ վտանգը մասամբ թեթեւացնելու նպատակով, այսօր այդ բանը չը կայ:

Այս անգամ բողոքող ասարի ներկայացուցիչները որոշել են անողորմ լինել. ուլտիմատում գնել մինչև օրս Դաշնակցութիւնը խորհրդատուների մէջ տանող անձերի հանդէպ ու պահանջել կամ լայն զիջողութիւն կազմակերպութիւնը զուտ յեղափոխական և լուրջ հիմքեր վրա դրելու և կամ թէ հեռացում յեղափոխական ասպարէզից: Եւ ջողերը պարտաւորված են զիջել... որովհետեւ իրենք էլ ըզգում են թէ հին սխտեմով գործ շարունակել չէ կարելի: Վախկայ Պիտեանի կամ Վառնայի երբեմնի խոհարար Վահագի, այժմ Ամերիկայի պատգամատուների ձայներից... գրանք ոչ մի նշանակութիւն չունեն, բաւ է որ ջողերը զիջանին, ծառաները խոնարհութեամբ նրանց կը հետեւին... նրանց գոյութիւնը ընդհանուր ժողովում միայն մըխիթարութիւն կը լինի Բուլգարիայի և Ամերիկայի խոհուկ ներհատուների համար, ուրիշ ոչինչ... իսկ ջողերը կը զիջանին, և անպատճառ... խաչը մերն է, զօրութիւնը մենք գիտենք և ուրիշ էլ հնար չունեն...»

Այս անգամ Դաշնակցութիւնը պէտք է բարենորոգվի... գահակասված է... գործը կովկասից և արտասահմանից երկիր պէտք է փոխադրվի. զանազան բիւրօներ խմբագրութիւններ, որոնք դի-

լիտանդների և ձրիակերների որջերի են վերածված ինչպէս առևտրական պաշտօնատները պէտք է վերջանան. ու Դաշնակցութիւնը պարտաւորված ձեռք պէտք է մեկնէ բոլոր հայ յեղափոխականներին, որոնց նպատակն է տեճկահայի ազատագրութեան գործը և Դաշնակցութիւնը այս բաղձալի դրութեան հասցնելու համար պէտք է միայն տասնեակ հազար ֆրանք և 10 նանձնէր դաշնակցականներ փորձված զեկովարողով ու կարող ենք յայտարարել որ այդ էլ կայ. Իրականութեան մէջ:

Ձարմանալի կը լինէր եթէ այսպէս չը լինէր. այն ժամանակ կարելի էր ենթադրել որ մեր 18 տարեկան յեղափոխութիւնը միայն մորթվող ոչխարներ և այդ մորթվողներին հարստահարող յեղափոխական անուն կրող շարլատաներ է ստեղծել... այն ժամանակ պէտք էր ընդունել որ Պետտերի, Արտաշէսների, Բարկէնների, Գնունիների անձնագրահութեան գալուստի մեր գործը ինչպէս են մեր յիշողութիւնից և մենք մեղկացած կարող ենք լէ սսէ ֆէր, լէ սսէ պուսէ, ոգ... գոհանալ և թողնել որ այդ գալուստի մեր նկարագրութիւններով լծի տակ սառապող ժողովուրդը շահագործվի ինչպատ ձրիակերների, հացկատակների և ամատեօրների զխասակար գոյութեան...»

ՎԱՐՂՕ

ՊՈՒԿԱՐԻՈՅ ՀՈՅ ՈՒՍՈՒՒ ՏԻՉՆԵՐՈՒՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հետզհետէ ժողովականներուն թիւը կը ստուարանայ և նիստերը կանոնաւորապէս կը շարունակուին: Կրթական ծրագիրն է որ այժմ վիճարանութեան առարկայ դարձած է: Ծրագրին ձեռք զարնելէ առաջ, ուսուցիչներէն յատկապէս ուղեցին հասկնալ թէ լոկ գիտութեանն պիտի ա-

ռաջնորդուին, թէ ոչ՝ պիտի ստիպուին դպրոցին մէջ աւանդել վիճելի և խնդրական նիւթեր ալ: Երկար վիճարանութիւններէ ետքը, ժողովին մեծամասնութիւնը որոշեց թէ կարելի չէ տակաին կրթական ծրագրէն դուրս հանել այնպիսի առարկաներ որոնք հանրութեան համար նուիրական են:

Ըստ նորագոյն մանկավարժութեան, նախնական կրթութիւնը պարտաւորիչ է և կը տրուի թէ՛ մանկապարտէզին և թէ՛ նախակրթարանին մէջ: Տղան 5—7 տարեկան, պիտի մնայ մանկապարտէզը, իսկ 7—13 տարեկան, պիտի յաճախէ նախակրթարան, որ երեք դասընթացք պիտի ունենայ, ծարրական, Միջին և բարձրագոյն:

Նկատելով որ մինչև ցարդ մանկապարտէզը, դրամական տեսակէտով, մատչելի չէ եղած, համագումարը միաձայն որոշեց Հոգաբարձութեանց ուղեգրութիւնը հրաւերելով այս կէտին վրայ՝ խնդրել իրենցմէ որ շափաւոր սմասթոշակ պահանջեն ժողովուրդի վաւակներէն:

Բարէտախտակի գործածութիւնը՝ առողջապահական տեսակէտով՝ զխասակար նկատուեցաւ. բայց որովհետեւ անոր տեղը բռնող ուրիշ առարկայ չի կայ, որոշուեցաւ առ այժմ՝ գործածել զայն:

Մանկապարտէզի մէջ, հաճելի և զբօսայի եզանակով տղաքը պիտի կրթուին. բնաւ չպիտի կարգան և չպիտի գրեն, այլ իրենց մայրերի լեզուն խօսելու պիտի վարժուին: Կլաւոր շարժումները պիտի վերցուին՝ իբրեւ սեւորդ և զխասակար դասեր:

Հեղուներու աւանդման տեսն, ընդհանուրէն մասնաւորին երթալու մեթոտը պիտի գործադրուի: Գիծերու միջոցաւ, տղան

Ի. Խ — Այս ակնարկը կը վերաբերի «Շարքշարի» հաղորդած կրօնքը դուրս հանելու խնդրին:

պիտի սորվի խօսքը և իր մասն-  
ւը, վանկերը և տուբերը, նա-  
խակրթարանի առաջին տարուան  
կէսը՝ լոկ խօսելու վարժութեան  
պիտի յատկացուի, իսկ միւս  
կէսին մէջ՝ տղաքը պիտի սկսին  
կարգալ և գրել:

Վեց տարուան մէջ, հայ տղան  
պիտի ուսնի իր մայրենի լեզ-  
ունով խօսել, կարգալ և գրել:  
Բարձրագոյն գասընթացքին մէջ,  
պիտի աւանդուի գրագիրտութեան  
տարրերը և հայ մատենագրու-  
թեան համառօտ պատմութիւն:  
Գալով գրաբառին՝ անոր ա՛յն  
ձեւերը՝ միայն պիտի աւանդուին  
որոնք աշխարհաբարի մէջ կը  
գործածուին:

Տարրական դասընթացքի Բ.  
տարիէն սկսեալ, մեծ խնամքով  
պիտի աւանդուի պուկար լեզուն,  
այնպէս որ հայ տղան կարենայ  
գիրմանքի մտնել՝ առանց զըմ-  
ւարութեան բազխելու: Նախա-  
պէս, տղաքը կէս տարի խօսելու  
պիտի վարժուի: Այսպէս պիտի  
կարգանա գրելը:

Միեւնոյն մեթոտով պիտի ա-  
ւանդուի ֆրանսերէնը՝ միջին  
գասընթացքի Ա. տարիէն սկսե-  
ալ:

Գասերու արտագրութիւնը,  
իբր տաղակացուցիչ և մեքենա-  
կան միջոց, պիտի վտարուի հայ  
վարժարաններէն:

Կոստ

Վառնա, 30 յուլիս 1906

ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆ ԱՐՁԱԿԱՆՔ

Յիւլի 29 Յուլիս 1906

Յարգելի պ. Վարդօ  
Ձեր վերջին խմբագրականով  
կազմակերպութեան անբարոյակա-  
նազման մասին խօսելէ յետոյ՝ ինձ  
նաև նկատել կուտայ որ՝ այդ պա-  
կանած միջոցառումը մտքերու հա-  
մար, պէտք չէ անտարբեր հանդիսա-  
տես ըլլալ և դիտել թէ ինչպէս տա-  
կաւ առ տակաւ ճահիճին ազդուող  
ընթացքը ընթացքին մէջ կը շո-  
ղանայ և վերջի վերջոյ շորցած ա-  
մուր գետինը յետոյ կ'ուլայ, այլ  
պէտք է սղի իրովն աշխատել կուր-  
մաքտով: Որպէսզէն ճահիճին շորջը  
քանակներ բացուելով այդ հոսած  
պղտոր շորջը վազէ երթալ ու շորջա  
ցումը աւելի արագ կատարուի:

Ճահիճներ մտքերու Ձեր այս մէ-  
թոտը յիրաւի դնահատելի է սակայն  
կը կարծեմ թէ. գործնական կրնայ  
ըլլալ միայն այն տեղերու համար,  
որ ճահիճը ընդարձակ դաշտերով  
չըջապատուած է և ոչ թէ հեկայ ա-  
պառաժներով:

Պուկարից և ի մասնաւորի Յիւլի-  
պէի կազմակերպական վիճակը՝ ճա-  
հիճը. կը համարձակեմ բնութիւն  
խակական սիւնիին ժայռերով շրջա-  
պատուած է և ոչ մի քանակ չէ կա-  
րելի բան սլ աւելի շուտ շորջանելու  
համար հոն հաւաքուած կեղտոտու-  
թիւնը, որովհետեւ կազմակերպու-  
թեան մը մէջ երբ անդամներուն 0/0  
95ը գատողութիւն ընելու կարողու-  
թեան զուրկ մարդիկ են, երբ այդ  
զանգուածը իր շէֆերուն փողն է որ  
կը հնչեցնէ միշտ ու անոնց հովանիին  
տակ կապրի ի պահանջել հարկին ի-  
րենց տալով թէ՛ նիւթական և թէ՛  
բարոյական ամէն տեսակ սջակցու-  
թիւն, այդպիսի միջավայրի մը մէջ  
և թէ 95երորդ մը գանուի, որը ելլայ  
սիրող կացութիւնը քննադատէ ա-  
ռանց ուշադրութեան առնելու թէ  
իր ձայնը մեծերուն սկանջին անա-  
խորժ պիտի գայ. այդպիսի պայման-

ներու մէջ ապրող բողոքողը ինչքան  
ալ բուն ճիշդ թափէ որքան ալ  
ցայտուն կերպով նկարագրէ տիրող  
անբարոյակաճութիւնը ու մտնանչէ  
ապագայ վտանգները, վերջապէս  
մաքրագործելու նպատակով թոյլատ-  
րելի ինչ միջոցներու ալ դիմելու ըլ-  
լայ, այդ բողոքողին ճիշդը և Պ. Ա. Ր.  
Գի. Ի. ն պիտի մնան:

Ասի՛ չափազանցութիւն կամ յոռե-  
տեսի մը գաղափարներուն այտայտ-  
աութիւնը թող չը նկատուի, այլ ցա-  
ւալի ու վրշա պատճառող իրողու-  
թիւններ են որոնք իրենց գոյութեան  
ուրոյն պատճառները ունին:

Թուենք անոնց մէկ երկուքը:  
Տարիներու ընթացքին մէջ ընկեր-  
ները ըլլալով միշտ համակերպողներ,  
իրենց շէֆերու մասին համոզում գո-  
յացուցած են որ, անոնք՝ ամէն ինչ  
որ ըրած են և կամ կ'ընեն, միտ  
կազմակերպութեան շահը աշքի առաջ  
ունենցած են, ու ըլլալով միեւնոյն ա-  
տեն իրենցմէ մաստապակաւ աւելի  
զարգացած մարդիկներ, միշտ ան-  
սխալական եղած են իրենց գործերուն  
մէջ, հետեւաբար քննադատութեան  
պէտք չկայ:

Եթէ երբէք մէկը ելլայ ու այս  
պայմաններու մէջ համարձակի քըն-  
նադատել անոնց գործունէութիւնը,  
95 բողոքելով կազմող մասնաւոր  
զրպարտիչ անունով կը մկրտէ զին-  
քը:

Երբ մէկը այսօրուան կացութիւնը  
իր բոլոր գոյներով կը նկարագրէ ու  
այդ կացութիւնը ստեղծողներուն  
թուլութիւնը և պակասութիւնը ե-  
րեւան հանելով զանոնք անողորմ  
բար կը հարուածէ, այս վերջինները  
աններելի յանցանք նկատելով բողո-  
քողին ընթացքը, որպէսզի կարենան  
եղած քննադատութիւններուն հաւա-  
նական ազդեցութիւնը չեզոքացնել,  
ճիշդութեան ամենակտրուկ միջոցի  
կը դիմեն, այն է մոտեւ ու բողո-  
քողին անձին շուրջը առասպելական  
խեղաթիւրուներ յորինել սրակտի  
մեւ ընկերներու վրայ անոր ունե-  
ցած բռնութիւնը մի անգամ ընդ միշտ  
կորսուի:

Իսկ մարդ մը որ այսպիսի Կիւն-  
վայրի մը մէջ կապրի, երբ ուրիշ-  
ներուն վրայ իր ունեցած բռնութիւնը  
կը կորսնցնէ, գերբնական ճիշդ իսկ  
եթէ թափելու ըլլայ, չօչափելի ոչ մի  
արդիւնք կարող է ձեռք բերել:

Միւնչոյն Երոզայ՝ ըլլալ քաղաքա-  
կան թէ յեղափոխական կազմակեր-  
պութիւններու մէջ, խնդիրը բողոքո-  
վին տարբեր գոյն ունի: Հոն գոր-  
ծունէութեան ասպարէզ մը կայ բո-  
լոր անոնց համար, որոնք չեն կրնար  
ճնշող գրութեան ասկ շարունակ  
գրուել ծռած ապրիլ, որոնք յիժոն  
են և չեն ուզեր սրտաւն սեծախրուն  
լաքէները ըլլալ, այլ բարձր ձայնով  
կը բողոքեն եղած անիրաւութեանց  
դէմ ու ամենախիստ կերպով կը  
քննադատեն կացութիւնը:

Բողոքի այդ ձայնը հոն լայն ար-  
ձագանք կը գտնէ ընկերներու շար-  
քին մէջ, Անմիջապէս տարբեր հաս-  
կցողութիւններու հոսանք մը կը  
սկսի, ու բողոքող անձը կամ տնձերը  
քիչ ժամանակի մէջ իրենց համախոհ-  
ներ գտնելով՝ գաղափարական ազնիւ  
պայքար մը կը սկսին մեծամասնու-  
թեան դէմ և յաճախ կը պատահի որ  
կը յաջողին իրենց կէտ նպատակին  
հասնել, Հոն սակայն Երոզայ է,  
կուսակցութեանը անդամները ոչխա-  
րամիտներ չեն, այլ քիչ շատ զար-  
գացած ու իրենց գերը լաւ հասկցած  
անձեր են: Հոն շէֆերն ալ երբ կը  
տեսնեն թէ իրենց դէմ պայքար մը  
սկսած է չեն սեցնել, չեն մոտեւ  
իրենց հակառակորդները, այլ կ'ուր  
ազնիւ օրէն առաջ կը տանին:

Պէտք է խոստովանի վերջապէս  
որ՝ անցնալին մէջ գործուած ախ-  
նամեծ սխալին գէշ հետեւանքներն  
են որ այսօր կը կրննք:

Ժամանակին մեր անտնտրողիբը  
լայն կերպով բացած են կազմակերպու-  
թեան, արտասահմանի մէջ դասեր ու  
բոլոր էլ վճարողները գրկաբաց  
ընդունած են իբր կազմակերպութեան  
անդամ անոնց տալով բարլամենթա-  
րական ամենալայն իրաւունքներ:  
Սակայն չեն կրցած հասկնալ ու

Մ. Յ Ո Ւ Ս Կ

ԱՐՅՈՒՆ ԲՈՏ ՊԱՏԱՌՆԵՐ

Ա.  
ՊԱՏՐԱՆՔԸ

(Բարիգահայ կեանքէ)

Բոլոր մարդոց գէժերը ճշմա-  
բիտ են, ինչ ալ իրենց  
ձեռքերն ըլլան:

Այլ չկա՛յ երբէք՝ ճշմարիտ  
կին մը՝ ճշմարիտ գէժերով:  
ՇԷՅՄԱՐԻՐ 8

Դ.

Ան կը պատկերանայ վիշիտ յա-  
րժպիտ երկնակամարը, իր գագի  
նօն, գազինօյն գէժի բարձր շէնքը,  
քաղցր սիրուն բանօրաման դիտող  
երկրորդ յարկի պերճ, շտայօրէն կա  
հաւորուած սենեակը, եւ... Ա՛հ,  
որքան կոտորացուցիչ, որքան խայ-  
թող է սակէ անդիտ պատկերը, որ-  
քան հոգեճմարտ, որքան զարհուրա-  
բեր, Այդ բոլորէն վերջ կը բարձրա-  
նայ Անժէլի տեսիլը. — աբօֆօօզ  
մը, այս մահկանացու փառքերուն

վրայ տիրապետող երկնաօդ  
զմայլանք մը:

Բայց դժան է այդ օր, վայրագ  
բան մը ունի վրան, փոթորկած  
ծով մըն է՝ որ կուզէ խորտակել,  
փշրել, քանդել...

Դրա՛մ, դրա՛մ, դրա՛մ, կը գո-  
չէ, Պէ՛տք է վայելել, պէ՛տք է ըմ-  
պել երիտասարդութեան բաժակը՝  
երիտասարդութեան րոպէին:

Այո, իրաւունք ունի, Դժնեքեքիւի,  
անհրապարտ ժամանակը, յուս ու  
գաղտնագրի, սրագ քայլերով միշտ  
յառաջ կը փութայ, ճակատները  
կակօտէ, գէժերը կը թառամէ, ար-  
իւնը կը սառնցնէ, գեղ ու թովանք  
կը խլէ, կը յափշտակէ ու կը տանի  
կը նետէ իր խոր ու անյատակ սո-  
րբերուն մէջ, ալ հեղ մը եւս չը  
վերադարձնելու անչիղ կամքով:  
Սյո, իրաւունք ունի, պէ՛տք է վա-  
յելել, հիմա է շրջանը:

Նստած տեղէն կը դիտէ Արսէն  
մրափող Անժէլին, փնտցող պարկի  
մը հրապարտ ունի էն նոյն րոպէին,  
Մշիկ մշիկ կը հեկայ, Լայն, վաւա-  
կուրճէք նպատակէն կոհակի մը նը-  
ման հանդամաւորէն կեյեւելէ, կափա-  
րիչները, յուզումով եւ քունով խոն-  
ջացած՝ ծանրացած են երկու գրաւիչ  
աչքերուն վրայ, Մանր ոտները,

ճերմակ սնդուէ կիսակօ իկներու  
մէջ կաղապարուած, դուրս են խո-  
յացած շրջազգեստին տակէն:

Ոտքի կելլէ Արսէն: Օղաւազ ոպի  
մը կարող չէ այդքան անչուկ շար-  
ժիլ, կը մօտենայ օրիորդի աթոռին,  
տենչ մը, անզուսպ, անբացատրելի  
տենչ մը կը տիրապետէ զինքը՝ իշ-  
նայ վրան, պրկել թեւերուն մէջ,  
փարիլ, շոյել, համբուրել, բայց  
արթնցնելու երկիւղը, այդ հանդիստը  
խոզելու սրբապիղծ արարքը՝ ետ կը  
կեցնեն զինք մտադրութեանէն, կը  
դիմադրէ բուն բաղձանքին, Պան  
մը նորէն կը դիտէ արշին, Չէ՛,  
հնար է լեռան բարձունքներէն վա-  
զող հոսանքները գրկել, բայց այս  
տենչը խափանել՝ երբէք, կը ծոխ-  
վրան, կը մօտենցնէ շրթները աղջկան  
շրթներուն եւ երկուր կը մնայ,  
անզգայ է էն, սեւի լաւ, Յետոյ  
կը բարձրանայ, վար կանէ վարա-  
գոյրը, կարգիլէ արեւուն մօտքը,  
կընէ ուրիշ ինչ որ հարկ է՝ էնոր  
հանդիստ նիւջին եւ կը սահի դուրս:  
Հեղ մը փողոց, մայրիկ վրայ,  
ուղեղը մեղզներու բեթաքի մը նը-  
ման կը բզզայ, կը վժժայ... Ուր  
երթալ ինչ ընել, թողո՛ւ, այդ աղ-  
ջիկը, կը նախընտրէր աւելի զրկուի  
կեանքէ՝ քան զրկուի Անժէլէն:

Բաւական տեղ քալել կը այս ա-  
նորոյութեան մէջ, երբ միտք մը  
փայլեցաւ: Կանչեց կառք մը եւ  
հասցէ մը տալով՝ տասը վայրկեան  
յետոյ հոյակապ թէլի մը, առջեւ էր  
Պատուիրելով կառավարին սպասել՝  
բարձրացաւ վեր:

Բարիզէն ծածօթ երիտասարդի մը  
եւնեակն էր այդ, որմէ փոքրիկ փո-  
խառութիւն մը ընելու եկած էր՝  
կարճ ժամանակով, Երիտասարդը,  
հազիւ 25 ամեայ, գաւառներէն հա-  
րուստ վաճառականի մը որդին էր,  
ուսանող իրաւաբանութեան՝ որուն  
երկար տարիներէ կը հետեւէր ա-  
ռանց բան մը ձեռք ձգած ըլլալու  
եւ պիտի շարունակէր գեո միեւնոյն  
ապարդիւն հետեւանքով, Երկուքն  
ալ չաւայ հօր գաւակները՝ լաւ ծա-  
նօթները դարձած էին Բարիզ ու հոս  
ալ եկած միմեանց գտած:

Ռօպէր Բօնսթան — այդ էր Ֆրան-  
սացի երիտասարդին անունը թէեւ  
ո եւ է ծառայութեան արամաղիւր,  
բայց դժբախտաբար, վերջին պա-  
հուն մեծ կորուստ ունենալով խա-  
ղէն, հազիւ կրնար 6—700 Ֆրանք  
փոխ ալ Արսէնի: Վերջինս քա-  
ցաւ այդքանով, սակայն Ռօպէր, ու-  
զելով ընկերով պէտքերն աւելի լիւր-  
ի գոհացում մը տալ, առաջարկ զը-

կանխատեսել որ եթէ 1 լիվ տուրք վճարող անձը ձայնատուութեան իրաւունք ստանալու, կը գտնուին յետին մտածումներ ունեցող անձներ ալ, որոնք իրենց դիրքը ապահովելու համար չեն վարաներ շահագործելու այդ անգիտակից անգամներուն ձայնները :

Պէտք էր գիտնալ որ յեղափոխական կազմակերպութիւն մը բարեգործական ընկերութիւն չէ որ ընտրութիւնը այդ եղանակով ըլլար, այլ պէտք էր խիստ ցէնզըր ենթակի բոլոր անդամները որոնք ձայն տալու իրաւունք կուզեն ունենալ, իսկ ցէնզըր չհամապատասխանող անձերը իրենց 1 լիվ տուրքը վճարելով նոր իրատու կամ օժանդակող ընկերներ պէտք էր ըլլաին :

Այսպէս, եղափոխակի ըսածներս պիտի կրկնեմ դարձեալ թէ՛ առաջն՝ ձիւն անհատներու մասքառու մը ընտրելու պայմաններուն մէջ, րոտիս չէ կարող բարեկամել տիրող գրուութիւնը :

Ճահիճը մարտի 10, այսինքն մարտի 10-ը միայն առաջիկայ ընդհանուր պատգամաւորական ժողովն է որ պիտի աշխատի իր ըմբռնած միջոցով զուլիս հանել :

Սակայն մարտի 10-ը բարձրագոյն մարմինն վրայ ալ կարծես կը կորսնցնէ իր յայտը երբ կը տեսնէ թէ ստոր թիփ լաքէյ մը յաջողած է հոն ալ քիթը խօթել հիմակուանէ պատգամաւոր ընտրուելով :

Բայց ես կը հաւատամ թէ կազմակերպութեան մէջ կայ տակաւին մարտի տարր մը, թէ՛ ձԾՄԱՐԻՏ յեղափոխականներուն ամենքն ալ չեն ճնոցած ասկաւին : Անոնք անտարակոյս, ճանչնալով իրենց պատասխանատուութիւնը ապագայ սերունդին և պատմութեան առջեւ, տառապող ժողովրդին գագառուն երուն ճշմարիտ արտայայտիչը պիտի ըլլան և պիտի աշխատին «գործը» իր իսկական բարձրութեան վրայ գնել և յետ :

Իրաւ հետեւեալը. — Վրի կը գտնուէր հոր հետ գործառնութիւններ ունեցող վաճառական մը, կրնար իրենք ֆոնով իմաց տալ հորը եւ յիշեալ վաճառականէն, ի հոշիւ ծնողաց անեւ 1—150 ֆրանք անմիջական պիտոյքի մը համար : Որոշումը իրագործուեցաւ շատ հոյակապօրէն : Արտուէրի ուրախութեան չափը կոպար չենէր : Որքան պիտի զարմանք պատճառէր Անժէլի, որքան հոյակապ սիւրբօրից մը պիտի ըլլար էնոր՝ բանալով աչքերը, տեսնել սեղանին վրայ տասնեակ մը հարիւրնոց թղթեր :

Արսէն, իր երազներուն տղուոր հեռապատկերներովը ոգեւորուած՝ զէպի տունն արշաւելու հապճեպին մէջէն էր, երբ Ռուպէր, բռնելով թեւէն, կանգնեցաւ զայն :

— Պէտք է հեղ մը բաղաբերին փորձել, ըսաւ :  
— Ի՞նչ բաղդ, գոչեց Արսէն շուարած :  
— Ռուպէրին շուրջը :  
— Ո՛հ, ճշաց հայ երիտասարդը այսահար : Ռուպէր... ո՛հ, ոչ, ոչ, կը ստակամ ատկէ. չեմ ուզեր, չեմ կրնար, անկարելի է...  
— Տղայ մի ըլլար...  
— Ոչ, սիրելի իրարեկամս, կը սոս-

ղափոխական անունի տակ կծկող ձրիակեր բոխտախնդիրները եթէ ոչ վտարել առ այժմ, գէթ առնուազն զանոնք չեզոքացնել :

Անցեալ անգամ ընթացիւն զանազան էնտրիքներով յաջողեցաւ լաւցնել տալ բողոքող ձայները, այս անգամ տեսնանք... :

ՎԵՅ ԱՄԻՍ ՊԱՐԻՉՈՒՄ

(Տպաւորութիւններ)

(Շար. 827 թիւէն)

Անցեալներում խօսելով Մուզէ կլիւնի մասին, խոստացել էի խօսել միւս փոքրիկ Մուզէ Քրէվէնի մասին Այս մուզէն գլխաւորաբար այցելուում է երկկոյնանները. երբ նա ընկզմոված է խորհրդաւոր լոյսի մէջ, սրանում ձեւակերտներ կամ մտքկային բուսային հանքային ու անասնական մնացորդները չեն որ հրապուրում են այցելուներին. ոչ այլ մոմից շինված պատմական անձնաւորութիւններ և տեսարաններ Հոռոմի և Ֆրանսայի կեանքից. կենդանի կերպով աչքիդ առջեւ ներկայանում է Հոռոմ իր գազանացած ամբոխով որ զարմանում է գազաններից յոշոտովող քրիստոնեայ կանանց ծերերի մանուկների տանջանքներով. միւս կողմում տեսնում ես Ֆրանսայի միապետութիւնը կործանման օրերին հասած, թագաորական տան եւ բարձր պաշտօնեաների զէխ, շայտ կեանքի պատկերը—մի ուրիշ աեղում կանգնած են Դանտոն Սէնթուստ Կապիլ Դէմուլէն Ռուպէրի իրենց խորհրդաւոր, վճողական սարսուռ ազգող զէմբերով. մի բուռն մարդիկ որոնք ոչ միայն Ֆրանսայի պետական կազմակերպութիւնը յաղաղակցին այլ և ամբողջ քաղաքակրթ աշխարհի. երբոր տեղում իր աքորովայրի նեղ խցիկում մահացած է հսկայ նապօլէօնը խղճուկ մահակալի վրա... այդ խոշոր մար-

կամ այդ խաղէն. պէտք է տուն երթամ, ստիպողական է. չես գիտեր թէ որքան հրամայողական պարագաներ կը հարկադրեն զիս թողուլ քեզ գէթ այս բուպէիս : Ռ. Բենն, ներէ՛, սիրելի Ռուպէր :

— Չէ՛, չէ՛, կը պնդէր Ֆրանսացին. թոյլ չեմ տար. պէտք է երթանք ըզողերին փորձենք : Գացածը բան մը չէ. խոհեմաբար կը շարժինք, մինչեւ որ աւելին գայ :

— Ռուպէր մի՛ ստիպիր զիս. գրամ մտնելէն աւելի կարեւոր կէտ մը կայ. մի արգիւր. թող որ տուն երթաւ...  
— Ի՞նչ կայ տունը, եղբայր, կըրակի մէջ չէ՞ :

— Ռուպէր. Անժէլը կայ, Անժէլը վշտացած թողուցի լոկ այս դրամի առիթով, եւ, քանի որ փրկեցիք զիս ծանր տագնապէ մը, թող որ երթամ հաշտուիմ կարելի չեղածին չափ շուտով, կը խնդրեմ Ռուպէր :

— Ա՛հ, նորէ՛ն այդ էգ-սասանան. եթէ գիտնալի էնոր պատճառով ըլլալը՝ սանթիմ մըն ալ չէի տար, քսա երիտասարդը խնդարով, Օ՛ն, պարապ խօսքերով, ժամավաճառ չըլլանք. քալէ...  
— Ռուպէր, կը պաղատէր խեղճ Արսէն, անզօր գիմարելու, Ռուպէր, թող այսօր. ուրիշ ատեն :

դոց միջից անպակաս է մնացիւն ձառնցի ժէնէրալ Եօլին—Ռորթ Արթուրը գրաւորը. տասնեակ վայրկեաններով կանգնում ես այդ մոմեղն արձանների առջեւ, որոնք յար եւ նման են իրենց օրիժինայներին և մաքով սաւառնում մարդկային կեանքի հին օրերում ուր թագաւորները կարող էին հազարաւոր մարդկանց գազանների առջեւ նետել, այրել, զլաւճանալ նրանց տանջանքներով, հրացանի բռնել նրանց երէնների պէս ու կրկին գալիս կանգնում Միլաբայի. Դաստի, յաղորարդ Սէն ժիւստի խոստովմ Ռորթ պիլի խորխտ Կամիլ Դէմուլէնի կենդանի արձանների առջեւ ու ընկնում երկրպագու խորհրդածութիւնների մէջ այդ անզուգական անձերի մասին որոնք եկան վերջ տալու թագակիրների անսանձ քահանայութեանը բոնտութիւններին. որոնք ջախջախեցին աւանդական թագաւորական կարողութեան տատուածապարգէւ իննելը, որոնք սովորեցրին մարդկութեան թէ ոճրագործ գահակալներին պէտք է պատժել ինչպէս հասարակ մահականացու ոճրագործին են պատժում :

Մեծ մարդիկ, որոնք զաւակներ են իրօք մեծ ափի... ու զգում ես քո փոքրութիւնը քեզ ծնող ժողովրդի փոքրութիւնը... Բարկութիւնից սիրադ ճաթում է որ ոչ զու ոչ ազգայնական կարողացել էք ձեզ եւ մարդկութեան այնքան օգուտ տալ որչափ այդ միջանի Ֆրանսացիները... Այդ անձնաւորութիւնները մասին եղած ոչ մի պատմական նկարագրութիւն ինձ վրայ այնչափ զօրաւոր ազդեցութիւն չէր ունեցել որչափ այդ մոմեղն արձանները. ինձ թուում էր որ անհրաժեշտ էր որոտող ձայնը բարձրացնելով պիտի գոռար—քաղաքացիներ, բարկագները լաւ պաշտպանեցէք. Ռուպէրից պիտի աղաղակէր—բերէք այն հայրենիքի գուլճան ազնականներին որոնք օտարներից օգնութիւն են ուզում բանութիւնը մեր երկրում վերահաստատելու համար... :

— Արսէն, ըսաւ Ֆրանսացի երիտասարդը, այդ աղիկը զխուռ փորձանք մը պիտի բերէ. զգո՛յն. Կարելի եղածին չափ հեռու կեցիր իր մէջ...  
Վերջապէս, կամայ-ակամայ, տարուեցաւ Արսէն Ռուպէրին շուրջը Առաջին փորձը յաջող անցաւ. Ռուպէր կը տարուէր, այլ բաղդը կը ժպտէր Արսէնի : Սկսեակի յաջողութիւնն էր—մասնացու յաջողութիւնը—որ կը գինովցնէ, կը խելագարէ անփորձները :

Արսէն կանգ առաւ. կուզէր քաշուել, Եղուկ չորս կողմէն—քաջակութեամբ, ոգեւորում. կը վերսկսի : Մէկէն կը փոխուի ամէն ինչ, հիմակերթայ՝ փոխան վառուակի : շահածները կորսուելու վրայ են. կը վերջանան. կարգը կուգայ սեպհականին : Սաղը այլեւս խելայեղ է. մը տիկ շըններ մէկուն. մոլեգին ինքնամոռացութեան մէջ է : Թուղթերը արագօրէն կը սահին գրպանէն, Ռուպէր կանգ է առած : Նոյնը ընել կուզէ եւ ինք. — Հատ մը եւս, վերջին մըն ալ, երբոր մը, ամենակ վերջին մը, եւ անա, կը տանի ձեռքը գրպանը եւ կը հանդիպի երկու թղթի միայն :

Արսէն կը ամզուելի, կը սասի,

Նոյն Մուզէում կան եւ կատակոմբի Նմանութիւններ ուր գաղտնի կերպով իրենց պաշտամունքն էին կատարում Հոռոմի քրիստոսին հաւատացող քաղաքացիները... Սէնկէվիչի հրաշալի նկարագրութիւնը ազդել էր վրաս իհարկէ... Բայց խորհրդաւոր մթութեան մէջ կենդանի մարդկանց պէս կանգնած կրկներ, աղիկներն ու ձեռքեր հաւատաքի եւ ոչխարային հեղութեան գրոշմը զէմբերում ուղղակի սարսուռ էին ազդում վրաս... Նազովրեցի, Հոռոմում արհամարված հրէացիի որդին իր վարդապետութեամբ կարողացել էր գրաւել Հոռոմի թէ թշուառ և թէ իր զինութեամբ ու հարստութեամբ հպարտ զաւակին զէպի մութ կատակոմբերը աղօթելու համար եւ այդ իմ առջեւ էր այժմ. կենդանի կերպով ես ապրում եմ ներքին ժամանակում, նրա հալածականների միջաւայրում, այդ ինքնաճոռացութեան զրկանքի եւ տանջանքների միջուրտում... Եւ այդ ամբողջ հին ու նոր կեանքը կարելի է ապրել առանց դժուարութեան... չնչին գրամով... :

ՎԱՐՈ

(Շարունակելի)

ՀԱՅ ՖԵՄԻՆԻՉԱՐ

Նոր նախընտանի «Նոր—կը եանք» շարաթաթերթին վերջին սիւնն կրն մէջ կը կարգանք.

«Այսօր (յուլիս 2) կիրակի, քաղաքիս եկեղեցիներում նշանակուած են պատուիրակների ընտրութիւնները : Որովհետեւ վիհափառի կոնդակը պարզ չէ և նախատեսուած չէ ընտրութիւնների եղանակը և շեշտած չէ կնոջ մասնակցութիւնը, ուստի աչքի առաջ ունենալով ժողովրդի շահերը, առաջարկում ենք ձեզ, ծխականներ, ներկայ լի-

կը քարանայ, Գերիվեր ոյժով մըն է որ կը զսպէ ինքզինքը եւ մանկան մը զովացնող արցունքները չը հոսեցնէր մարած աչքերէն :

Կը նետուի դուրս, ի՞նչ ընել հիմա : Ի՞նչ տխմարութիւն էր որ գործեց : Ի՞նչ երեսով ներկայանալ Անժէլի... :

Ոյժ չունի տուն երթալու. կը մտնէ Կիլիսիայի մէջտեղում, տուն վերադառնալէ առաջ մտքին խառնաճաղանճային փոթորիկը խաղաղելու. կը փորձէ շուրջի իրարանցումը դիտելով մոռնալ ամէն ինչ, բայց զօր ջանք. անգուր կերպով կը ծխէ, մէկը միւսին ետեւէն, առանց ժամանակ տալու, տեղոտ չնջուսիտ. ըրով. Մտածիտիման նոր փորձ մը կուզէ ընել կը պատուի, է կատուին օրուան սթանդը բերել. թերթ կարդալու սովորութիւն չունենալով լուր չունէր օրուան անցուղարձէն :

Կը բերուի թերթը. Արսէն կը քանայ զայն եւ առաջին անգամ աչքին կը հանդիպին արիւնալի տոստի մը մեծատառ ուղղաձիւր—

«Արիւնահեղ կոտորած ի՛կ. Պոլիս, հազարաւոր կորուստ, ամենուրեք հօր եւ սուր, արիւն ու գիւակ. ընդհանուր կոտորում... :

(Շարունակելի)

նեկով ժողովին՝ չմասնակցել ընտրութիւններին, պահանջելով նախ հաւատարմագրութիւն, ընդհանուր և անմիջական ձայնատուութիւն, կանանց մասնակցութիւն և մեր յայտարարութիւնը երկու պատգամաւորի ընտրութիւն, հիմնուելով հէնց Վեհափառի հրահանգը—կոնդակի ցուցմունքի վրայ:

Պ Ա Տ Ճ Է Ն

Թաղական Խորհուրդ  
Ս. Սարգիս Եկեղեցւոյ  
Թիւ 256

Գերապատիւ

Տ. Մկրտիչ Մ. Վրդ. Աղանունի  
Իարեջան Առաջն. Եգիպտոսի  
Հայոց Ի Գահիրէ

Թաղական Խորհուրդս նկատելով որ Պուկար կառավարութիւնը Եգիպտոսէն եկող և օրինաւոր անցագիր ունեցող հայոց իշխանապետութեան հողը մտնելն զանազան պատճառներով կը մերժէ ընդունիլ, և մինչև իսկ Թաղական Խորհրդոյս բարեխօսութիւնն յաճախ օգտուած ընծայած չէ ճանապարհորդին, հարկ կը համարի ներկայիս խնդրել Ձեր Գերապատուութեանէն որ բարեհաճիք զեկուցանել թէ՛ տեղական թերթերու միջոցաւ և թէ՛ Եկեղեցւոյ բնակէն թէ, ի բաց առեալ պուկարահպատակ ազգայիններէ, քաղաքս զալու փափաք ունեցող օտարահպատակ ուրիշ ազգայիններ կարելի չէ որ ներս ընդունուին, հետեւաբար զուր տեղը դրամ վատնելով անցագիր չպատրաստեն այս կողմը գալու:

Մատչիմք ի համբոյր Ս. աջ. յգի ի գիմաց Թաղ. Խորհրդոյ  
Ասեմազպիք Ատենապետ  
Ն. Գ. Բէստանեան Խ. Աղնաւորեան  
Վառնա, 5 յուլիս 1906.

«Առաքել»

Ծ. Խ.— Ինչպէս կը սեսնանք մեր Թաղական Խորհուրդը շտապեր է Եգիպտոս հասցնել պաշտօնական թուղթ մը, որով վճռողականակէս կը խնդրէ որ Եգիպտոսի հայերէն պահանջ ուի որ այլևս Պուկարիա հայեր չը գան, Այդ պաշտօնական գրութիւնէն վերջը Եգիպտոսէն բուական հայեր եւս եկան, ու զեռ ուրիշ տեղերէ ալ կուգան, Մենք քրչսփ իմացած ենք սուս գեղով այդ հարցը, խնդիրը կը վերաբերի եղբր միայն անցագիր չունեցող և անգործ ու ազգատ հայերուն Այժմ Վառնայի Թաղական Խորհրդին կը մնայ նորէն Եգիպտոսի առաջնորդին պաշտօնական հաղորդել խնդրին էութիւնը, որովհետեւ Պուկարիա առհասարակ հայերուն հետ աղէկ կը վարուի, և երբեք իր հիմնական օրինաց հակառակ թան մը չի ընել հայերուն դէմ: Այդ լուրը «Շարժում» ևս հաղորդեց որ իրողութիւն էր, բայց հիմա կացութիւնը փոխուած է պարզաբանելը կը մնայ Վառնայի Թաղական Խորհուրդին:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մինչ Վաղարշապատի դաշտին մէջ հայերը իրենց հողագործական ու հովուական աշխատութիւններովը կը պարագային, յանկարծ իրենց վրայ կը յարձակին շրջակայ քանի մը պեղերու թուրքերը, արագ ձիգ հըրացաններով զինուած, Խաղաղ դաշտը ակնթարթի մը մէջ պատերազմի դաշտի կը փոխուի:

Տատանապալից վայրկեաններ հորիւրաւոր թուրքեր երեւր կողմէն կը պաշարեն կողակները ու տեղական իշխանութիւնը որ աւարի վայրը հասած էին, Բայց ահա հայ երիտասարդութիւնը կը հասնի, ու ճակատամարտին կացութիւնը կը փոխուի, կռիւը կը սկսի և անընդհատ վեց ժամ կը շարունակուի, թուրքերը պարտուած ետ կը նահանջեն, իրենց գրաւած գիրքերը թողլով, կռուի դաշտին վրայ իրենց մէջ գիսկ մը կը ձգեն, ու տասը տասնհինգ զիակ ալ հետերնին կը քաշեն կը տանին: Հայերը ոչ մեռնող կունենան, ոչ վիրաւոր:

Աստիկանութիւնը անմիջապէս Նրեւան հեռագրելով օգնութիւն խնդրեր է թուրքացի մէջ պաշտպանութիւն համար:

Թուրք խուժանը նահանջած պահուն իր վրէժը լուծեր է, մերձակայ հայ գիւղի մը ցորենի դեղերը այրելով:

—Նրուսապէմի Ս. պատրիարքը նկատելով որ իր կողմէ կիպրոս զրկուող տեսուչ վարդապետներուն երթեւեկը օսմ. կառավարութեան կողմէ արգելքներու կենթակուի կղզւոյն վրայ իր հողերը իրաւասութեանէն հրաժարած, և զայն կ. Պուսոյ պատրիարքութեան թողած է:

—Ատանայէն ստացուած մասնաւոր նամակէ մը կը տեղեկանանք որ կառավարութեանը Սոսոյ վտնքին Եգիպտոսը արձուցրէ թըլուրի ազգաւոր, Այս ուրախութիւն լուրը վերապահութեամբ կը հրատարակենք:

ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԼՈՒՐՆԵՐ

Ժընէվէն յուլիս 20րն կը հեռագրեն «Բրօ Արմէնիայ»ի հայերու և թուրքերու մէջ նոր ընդհարում կայ Եուզիի մէջ: Թաթարական 200 տուն այրուած է, սպաննուած են 90 թաթար և 12 հայ, Ասկերան ամրութեան մէջ ուր հայերը գիրք բռնած են, Թաթարները զանգուածային յարձակումով կուլէին խուժել Եուզի և շրջակայ գիւղերը, սակայն հայերէն ետ մղուած են, Թաթարները մեծ սարսափի մէջ են, բեկերը և խաները կը շարունակեն կործանարար բռնարարները:

Թունակեն կործանարար բռնարարները: Տեղական ոստիկանութիւնը ինչպէս միշտ անտարբեր անգործութեան մէջ է, Ժէնեւայի Վոյշապով առայժմ կը գործէ օրինաւորապէս, «Դրօշակ»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Անխիալօ քաղաքը որուն բընակիչներուն մեծ մասը յոյներ են, հրդեհուած է, ապտած է միայն պուկարաց թաղը, յոյներէն մարդկային կորուստներ շատ կան, պուկարներէն մօտ 15 հոգի, Հրդեհէն առաջ պուկար և յոյն ընդհարում ունեցէր են, կը կարծուի որ յոյն եպիսկոպոսը ևս այրուած է, Ջօրք եկեր է և զինթափ ըրեր է պուկարները, կառավարութիւնը կարգադրած է վրաններ զրկել անտուն մնացած բնակիչներուն համար:

—Մեծ ընդհարումներ տեղի ունեցեր են նաև Ռուսչուքի մէջ:

—Վառնայի մէջ երբ ազատական ընկերավարականները համագումարում ունէին պուկար քաղաքացիներու և տնոնց միջև ընդհարում տեղի ունեցաւ, երկու կողմէն ալ մարդիկ կան սպաննուած:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Անդլիական պեսպան Օկոնօր իր կառավարութեանէն հրահանգ ընդունած է որ Մակեդոնիոյ բարենորոգումներու ընդարձակումը պահանջէ և հակառակի մաքսային սուրքը 100րն 3 բարձրացնելուն մինչև որ բարենորոգումներուն խնդիրը չը կարգադրուի:

—Անցեալ շաբթու Սուլթանը բաւական ծանր հիւանդ եղած է, Եսյնպէս որ Սէլամըի արարողութիւնը տեղի չէ ունեցած, և այդ իրողութիւնը պատճառ եղած է Պոլսէն անցնող ճամբորդներուն կարծել տալ որ Սուլթանը մեռած է:

—Սուլթանը բուժելու համար հրաւիրուած են գերմանացի Բերկման բժշկապետը և երկու ֆրանսացիներ, յոյն եկեղեցիներու մէջ Սուլթանի առողջութեան համար մաղթանքներ կը կատարուին:

—Յուլիս 31ին Պոլսէն Վիէննա կը հաղորդեն Սուլթանի առողջութեան մասին վերջին լուրը այն է որ Սուլթանը վտանգէ գուրո է: Գեսպանները տեղեկութիւն պահանջեր են Երուսղէն և ամենահանգստացուցիչ պատասխան ընդունել են:

—Անգլիական դեսպանը Սուլթանի հիւանդութեան պատ

ճառով, իր կառավարութեանէն պահանջեր է որ անպիտան նաւատորմի ճարտանէլի քովերը գալ:

—Պ. Տ. գործակալութիւնը կը հաղորդէ թէ՛ յունաց պատրիարքը սինօգի ազգեցիկ անդամներէն մէկը զրկած է մեծ վեզիրին մօտ խնդրելու որ Բ. Իսոը եռանդուն միջոցներ ձեռք առնէ Պուկարիոյ յոյները պաշտպանելու համար: Մեծ վեզիրը պատասխանած է որ թուրք կառավարութիւնը չի կրնար իր ներկայացուցիչը ենթակայ ընել բացասական և անյաջող պատասխանի մը պուկար նախարարաց տին կողմէն, որովհետեւ շատ լաւ գիտէ որ Պուկարիոյ զէպերը արդիւնք են յոյն հրուսախորհրու շարագործութեանց Մակեդոնական երեք վիլայէթներու մէջ:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

—Կառավարութիւնը յաջողած է վարիչ յեղափոխականներու խումբ մը ձերբակալել զալտնի ժողովի մը ատեն, ձեռք անցած են նաև գործունէութեան կարեւոր քաններ:

—Յուրը քաղով մը հրամայած է իր պալատին պատկանող հողերը գրուին երկրագործական պանքաներուն տրամադրութեան տակ, որպէսզի աժան գնով վաճառուին գիւղացիներուն:

Շատ մը թերթերը վերկուած են իրենց հրատարակումը: Կառավարութիւնը որոշած է գններալ նահանգապետներուն պաշտօնները դեռ տարի մը եւս պահ պանել, Ներքին գործոց նախարարը բոլոր բռնտային վարչութիւններուն շրջաբերականով մը կը պատուիրէ մեծ զգուշութիւններ ձեռք առնել որովհետեւ մասնաւոր կազմակերպութիւն մը ստեղծուած է քաղաքական բանտարկեալները փախցնելու համար:

—Բեթերսպուրկի թերթերը կը հաղորդեն որ կովկասի փոխարքայ Դաշքով պիտի հրաժարի:

ՊԱՐՍՎԱՍՏԱՆ

Շահը որոշած է ոահմանադրութեան պէս բան մը տալ իր ժողովրդին: Երկրին ազնուականներու, հոգեւորականութեան և ժողովրդի ներկայացուցիչներէն ժողով մը պիտի կազմուի պետական խորհուրդ անունով: